

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՅԵՕՐԷՆ-ԽՄԱՍԴԻՐ
ԶԱՐԾԱՐՔԻՐ ԲՐԱԶԱՆԱՅ ԿԷԶԻՐԵԱՆ


Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 11 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1911

ԹԻԻ 35

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- | | |
|--|------------------------|
| ՀՈԳԵՒՈՒ ԿԵՐՆԻ. — Խաչը մեզի շրջապատին | ԳՐԻԳՈՐԻՍ |
| Խաչին առջեւ (քերթուած) | ԼՈՒՆՆԹԱԳ |
| Խնջո՛ւ Թափուր են | ԳԱԶՐԻԿ |
| ՍԻՆԵՆԱՅ ԳՊՐԱՅ. — (Գ.) Վանօրայք Սինեայ | ԴՆԷԼ Ծ. Վ. ԴԱԼԵՄԲԵՐՆԱՆ |
| ԵՐԱՅԱԿԱՆ. — (Գ.) ՍՏԵՂՆՈՒԹԻՒՆ. — Սաղմոսները | ՍՈՒՐԷՆ Ծ. Վ. ԳԱԼԵՄԵԱՆ |
| Վերջին վարդերը (քերթուած) | ԴՊՐԵՎԱՆՔՅՈՒ |
| ԿԱՅ ԱՍՏՈՒՄ. — Գ. — | Յ. ԱԼԹՈՒՆԳՅԱՆ |
| Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ. ՊՈՂՍՈՅ ՄԷՋ. — Իր բանախօսու- | ԽՄԱՍԴՐՈՒԹԻՒՆ |
| թիւնը. — Պէշկեմաշի մէջ | ԼԷՈՆ ԹՈԼՍՏՈՅ |
| ՅՈՒՆԻՔՈՒՆԻ ՊԱՄԳԻԼԻՈՍ. — Առաջին Բրիտանեա- | ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ |
| նորը Կոստանդնուպոլսի պատմութիւն (Շար.) | |
| ԱԶԳԱՅԻՆ ԿԵՐՆԻ. — Անտարգերութեան գերա- | |
| դականը. — Շաբթուան կարեւոր լուրերը | |



«ՏԱԾԱՐ»-Ի Թէ՛ վարչական եւ Թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է
գրիմէ առ Զարմայր Բաճանայ Կեզիւրեան, Կ. Պոլիս, Պեշկեմաշ, Հայոց եկեղեցի:

به.کطاش ارمنى کلیسا سنده «داجار» فزته سى مدبرى پاپاس زارماير افندی
Rev. Père Zarmair Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.

“ՏԱՃԱՐ”-ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոստի և ֆուտայի ցարկան	40 դրու
Արտատպանի համար	» 10 ցարկ
Ռուպիա	» 4 ցարկ
Ամերիկա	» 2 ցարկ
Ձեռքի կը ծախուի պահը	40 փարա

Հինգ բաժանորդ գտնողը իրաւունք ունի մէկ թերթ ձրի ստանալու:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ Ի ԿԱՆԻՒԿ ԵՆ
ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՆՈՒՆ ԴԻՒՐԱՄԱՏԱԶԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

«ՏԱՃԱՐ» ԿՐԾՆԱԹԵՐԹ

ԱՆԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ: — Առաջին. փոխա-
նորդ Տ. Արսէն Բէնյ. Դերձակեան
ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ: — Տ. Ռուբէն Բէնյ. Դա-
բեկեան
ԱՄԵՐԻԿԱ: — Առաջին. փոխանորդ Տ. Պո-
ղոս Վրդ. Դաֆթանեան
ԱՅՆԹԱՊ: — Տ. Գարեգին Բէնյ. Պողար-
եան
ԱՅԻՕՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ: — Տ. Խաչատուր
Ա. Բէնյ. Տօնէլեան
ԲԱՔԵՐԴ: — Մ. Սանոսեան էֆ.
ԴԱԴԱՏԻՍ: — Առաջնորդ Տ. Բարդէն Եպս.
Կիւլէսէրեան
ԴԱՀԻՐԷ: — Տ. Յարութիւն Բէնյ. Սար-
գիսեան
ԵՕԶՂԱՏ: — Առաջնորդ Տ. Խորէն Եպիսկո-
փան
ԵՐԶՆԿԱ: — Տ. Մեարոպ Բէնյ. Թորոսեան
ԶԾԻԻՌՆԻՍ: — Տ. Յարութիւն Բէնյ. Տ.
Սարգսեան
ԷՍԿԻ ՇԷՀԻՐ: — Տ. Դալուստ Բէնյ. Տ.
Դալուստեան
ԿԱՐԻՆ: — Առաջին. փոխանորդ Տ. Ներսէս
Ա. Բէնյ. Վահանեան
ԿԻՐԱՍՈՆ: — Սրապիոն Բէնյ. Ալլաեան

ՄԱՐԱՇ: — Տ. Հմայեակ Բէնյ. Վարժա-
պետեան
ՄԱՐԶՈՒՆ: — Յակոբ էֆ. Սրապեան
ՆԻԿՈՄԻԴԻԱ: — Տ. Ռուբ Բէնյ. Պիպեան
Շ. ԳԱՐԱՀԻՍԱՐ: — Տ. Նաթան Բէնյ.
Տառեան
ՈՒՇԱՔ: — Յարութիւն Բէնյ. Աստարզեան
ՊԱՆՏՐՄԱ: — ՊԱՆՏՐՄԱՐ: — Առաջնորդ Տ.
Կարապետ Եպիսկ. Մազլումեան
ՊԱՂՏԱՏ: — Առաջնորդ Տ. Մովսէս Ա.
Եպիսկ. Կէօմրիւքեան
ՌՈՒՍՃՈՒՐ: — Տ. Մկրտիչ Բէնյ. Մըրջ-
նիկեան
ՌՈՏՈՍԹՕ: — Առաջնորդ Տ. Դէորդ Մ.
Վրդ. Ալլաեան
ՍԵՐԱՄՏԻՍ: — Առաջին. փոխանորդ Տ.
Թէոփիլէ Բէնյ. Օտապալեան
ՍԵԼԱՆԻԿ: — Հոգեւոր Տեոուչ Տ. Կարա-
պետ Բէնյ. Թուրմանեան
ՏՄԱՐՏԱՆԷԼ: — Տ. Դիոնիսիոս Բէնյ. Տրէզ-
եան
ՏՐԴԱՆԱԿԵՐՏ: — Դաւիթ էֆ. Մովսէս-
եան
ՓԱՐԻԶ: — Հոգեւոր Տեոուչ Տ. Վահան-
ապետ Բէնյ. Բիպարեան
ՔՂԻ: — Առաջնորդ Տ. Պաակ Վրդ.
ՖՐԷԶՆՕ: — Յակոբ էֆ. Նշկեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԿՐԾՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 11 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1911

ԹԻԻ 35

ՀՈԳՆԻՈՐ ԿԵԱՆՔ

ԽԱՉԸ ՄԵԶԻ ՓՐԿՈՒԹԻՒՆ

«Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչև զորդին իւր միածին ետ, զի ամենայն որ հաւատայ ի նա՝ մի կորիցէ, այլ բնկացի զկեանսն յաւիտեական:»

(ՅՈՎ. Է. Գ. 16)

(Վաղուան հաշու. Աստուածային)

Շատ, շատ կանուխէն, երբ դեռ մարդկութիւնը կուսակաշտութեան մութ գիշերէն կ'անցնէր, երբ դեռ Բնութեան յայտնութիւնները աղօտ լոյս մը կը սփռէին իր համբուն վրայ, ու խիղճը առկայծեալ պատրոյգի մը պէս կը մխար, այո՛, այն ատենէն ի վեր, խորունկ գիտակցութիւն մը ու հաստատ համոզում մը արմատացած էր մարդկային սիրտերու մէջ՝ թէ Աստուածային փրկող ձեռք մը երկարելու է մինչեւ աշխարհ, հանելու համար մարդկութիւնը իր անկումի անդունդէն: Այսպէ՛ս կանխաձայնեցին հին դարերու իմաստուններն ու տեսանողները, այսպէ՛ս յուսացին բոլոր հին ժամանակներու սերունդները: Եւ երկրիս բոլոր ազգերը՝ մինչեւ իրենց

տոասպելաբանութիւնները՝ կը համաձայնին մարդկութեան Աստուածային ծագումին, այն բարձրութենէն անկումին, եւ նորէն Աստուածային ձեռքով մը նոյն այդ բարձրութեան վերանսլու կոչումին: Հոգ չէ թէ անոնց հասկացողութիւնը եւ արտայայտութիւնը այս ճշմարտութեան հանգէպ՝ ըլլան երբեմն շատ ծիծաղելի ու յիմարաւան. բայց ամէնուն տակ կայ այս ճշմարտութեան կորիզը, որ յաճախ կոշտ կեղեւներով ծածկուած է: Հետեւաբար Բրիտոնէութիւնն ալ իր փրկագործական մեծ վարդապետութիւնով մարդկութեան դարաւոր այս յոյսին, այս կարօտին կը պատասխանէ, ու ասոր համար անձկագին կ'ողջունուի փրկութեան բաղձանքովը բռնկող հոգիներէ:

Ա. Աստուած մեր փրկութեան գործին վեջ. — Բրիտոնէութեան մատուցած փրկութիւնը երկկողմնակի է. անոր մէջ Աստուած եւ մարդ իրենց ուրոյն բաժինները ունին, թէեւ այս բաժինները, այս դերերը իրարու հետ բաղդատել խկ կարելի չէ: Զոհողութեան անհամեմատելիօրէն մեծ բաժինը Աստ.

ուած յանձն առած է: Եւ ահա հոս կը սկսի հաշիւ պատմութիւնը: «Աստուած այնպէս սիրեց զաշխարհ որ իր միածին Որդին տուաւ:» Աստուած իբրեւ բարի Հայր գթաց անառակ որդի մարդկութեան վրայ ու անոր գարձին ըրաւ ամենամեծ զոհողութիւնը: Եւ ասոր համար է որ Քրիստոնէութեան փրկագործութեան պատգամը բոլոր մարդկութեան սիրտին կը խօսի: Անոր մէջ մեծ սէր, զոհողութիւն կայ: Խաչին քառաթեւ սեղանին վրայ, պատաւաբար կայ, որ մարդոց մեղքերուն համար կը մատուցուի, եւ սէրը իր գերագոյն զոհաբերումով արդարութեան անողոք ձայնը կը լռեցնէ: Ան կը խօսի նաեւ մարդոց միտքերուն, որովհետեւ արդարութեան վճիռը իր տեղը կը գտնէ: Յաճախ կեանքի մէջ մեր ալ քաջած տառապանքները ուրիշներու համար սիրոյ կամաւոր զոհաբերումներ չեն, հետեւաբար ինչ կայ ասոր մէջ անբնական: Ահա՛ այս կերպով հաշիւ պատմութիւնը աշխարհիս չորս ծագերուն կը յայտարարէր թէ Աստուած իբրեւ Հայր իր մեծութեան վայել մեծ սիրով մը սիրեց զաշխարհ, եւ իր միածին Որդին խաչի մահուան յանձնելով՝ ըրաւ գերագոյն զոհողութիւնը: Չմոռնանք թէ Քրիստոսը իբրեւ սարգ մարդ, մինչեւ իսկ իբրեւ կրօնքի մեծ վարդապետ մը խաչին վրայ տեսնել ուզողներ ուրիշ բան մը չեն ուզեր, եթէ ոչ փրկագործութեան պատգամը իր համայնապարփակ մեծութենէն նուազեցնել ու զոյն մարդկային անձնութեան պարզ պատմութիւն մը ընել: Բայց այդ՝ Աստուծոյ մեծ սիրոյն պատարագը չէ՞ իր արդարութիւնը յազեցնելու համար: Ուրեմն չմոռնանք թէ մեր փրկութեան համար Աստուծային սէր մը՝ Աստուծային զոհ մը կը մատուցանէ:

Բ. Մենք մեր փրկութեան գործին մէջ: Բայց փրկութեան այս մեծ գործը

միայն Աստուծային գերագոյն զոհողութիւն մը չէ: Հայրը ամէն բան ընելու պարտաւոր է, բայց Անառակ որդին պէտք է լռէ: «Ելլեմ, երթամ հօրքս:» Այս մեծ ծրագրին յաջողութիւնը մեր կեանքէն կախում ունի. պէտք է ուզենք փրկուիլ. պէտք է հաւատանք, այն ատեն խաչը պսակուած, ու խաչին պատմութիւնը նպատակուած արդիւնքով վերջաբանուած կ'ըլլայ, այն ատեն հաջր մեզի փրկութիւն կ'ըլլայ: «Աստուած իր միածին որդին տուաւ, որպէս զի ամէնք որ անոր հաւատայ չկորսուի:» Եւ որով կը նմանինք երբ չընդունինք այս մեծ փրկութիւնը: — Առատաշուր գետակներու եզերքը ծառաւ տապալուողի մը. լիութեան սեղանի մը քով անօթութենէ մեռնողի մը: Քրիստոնէութիւնը իբրեւ բնաւոր կրօնք մեր միտքերուն կը խօսի եւ մեր սիրտերը սիրաշահիլ կ'ուզէ: Ուրեմն ինչ պիտի կրնանք ըսել, երբ մեր իսկ կամքով յաւիտեան կ'որոշուինք իրենք, երբ գուրս կը փախչինք փրկութեան փարախէն: Չուրանանք բոլոր մարդկութեան, եւ իբրեւ մարդ մեր ալ փրկութեան պէտքը, չանտեսենք սիրոյ գերագոյն զոհը, խաչն ճառագայթող փրկութեան յոյսը. ու չմոռնանք մեր բաժինը: — Ուզել ու հաւատալ:

Գ. Յաւիտեան կեանք: Փրկագործութեան այս մեծ ծրագիրը, որ պատկուեցաւ Աստուծոյ որդիին մահով ու պիտի արդիւնաւորի մեր հաւատքով, յաւիտեան կեանքի անխախտելի երաշխիքն է: Մեր յաւատ կենսատենչիկ հոգիին կարօտը միայն յաւիտեան կեանքով կրնայ յազենալ, անոր համար պէտք է հաւատքի թեւերով փառինք փրկութեան եղծիւրներուն: Երբ մեր առօրեայ շահերն ու հեծոյցները զուգահեռ յաւիտեան ապրելու ցանկացող մէկու մը եռանդովն ու հաւատքովը յառաջ կը տանինք, ինչո՞ւ թուանանք եւ թերահաւատինք մեր հոգեւոր պարտականութիւններուն, մեր հաւատքի կեանքին մէջ: Հաւատքն է կենսատու ուժը մեր ամէն տեսակ գործերուն մէջ. հաւատանք որ ապրինք: Ա՛յ աւելի հաւատանք որ փրկուինք: «Քանզի Աստուած այնպէս սիրեց զաշխարհ, մինչեւ իր միածին Որդին տուաւ, որպէս զի ամէնք որ անոր հաւատայ չկորսուի, այլ յաւիտեան կեանք ունենայ:» ԳՐԻԳՈՐԻՍ

ԽԱԶԻՆ ԱՌՁԵԻ

ԻՆՉՈ՞Ւ ԹԱՓՈՒՐ ԵՆ

Մեղի՜ քախիծն հոգեմաշ,

Մութ անպերով սրտիս կոյս

Երկինն անանկ, սեւո՞ւնց, վա՛շ,

Ո՞ւր երբամ, ո՞ւր, դեպ ո՞ւր կոյս:

— Խաչի՞դ առջեւ, Սեր-Յիսուս,
Թափեմ քախիծն իմ հոգւոյս:

Վերեւ անբոյժ, պաշարներ

Կ'արիւնոսին հոգւոյս մեջ,

Համակ նեխեր եւ, փրսեր

Եիս, խիս խոցերն շեղաշեղջ:

— Խաչի՞դ առջեւ, Սեր-Յիսուս
Թափեմ վերեւն իմ հոգւոյս:

Կրու՛կ մը կայ շանջիս սակ,

Դրժոխք մը՝ վառ, կասաղի,

Դրժոխք մը՝ խո՛ւր, անյասա՛կ,

Բոցախրոյի կը փրփրի,

— Խաչի՞դ առջեւ, Սեր-Յիսուս,
Թափեմ դրժոխքն իմ հոգւոյս:

Կիրերու պիղծ, մոլեգին,

Որդեր զագիր ու անմեռ,

Կեանքս ամեն or կը կրծեն,

Տե՛ս, գիս ըրին կիսամեռ:

— Խաչի՞դ առջեւ Սեր-Յիսու՛ս,
Թափեմ որդերն իմ հոգւոյս:

Միս, չեմ գիտեր, ո՞ւր երբամ,

Վիշտերու մեջ քաքաւուն,

Դուն գութ ունիս, սեր փարբամ,

Քեզի՜ կուգամ դողողոջն:

Ու, կը քափեմ Խաչիդ սակ,
Արցունքներս քարմ, աղի՛, սափ:

Նայուածդ քոյ սքիւսան՛ւշ,

Արցունքներդ մարգրիս,

Ձերք մշկաքո՛յր իւր անուշ,

Հոգւոյս կարի՛ շիք առ շիք,

Քանգի միայն Խաչիդ սակ

Գրեմե՛ղ յուսամ սփոփանք:

ԼՈՒՍԵՆԹԱԳ



Ժամանակիս նշանները զարմանալի
բայց որոշիչ են Բ Պատմութեան մէջ քիչ
անդամ բոլորուած է այնպիսի խմորումի,
կամ՝ ինչպէս կ'ըսեն՝ անցումի շրջան ինչ-
պիսին են մեր ապրած օրերը: Ասիկա
զգալու, ասիկա տեսնելու համար հարկ
չկայ մեծ հանճարի տէր ըլլալ, բայց ապա-
հովապէս կամ շատ յոռետես ըլլալու է,
աւաղելու համար թէ ապագայ սերունդ-
ները վայել ու անէժքներ պիտի կարդան
մեզի, այս շրջանէն օգտուած չըլլալուն
համար՝ ինչպէս ոմանք կը կարծեն, կամ
շատ լաւատես ըլլալու է ցնծալու համար
թէ վաղուան Հայութիւնը երանիներ եւ
օրհնութիւններ պիտի հեղու մեր յիշատա-
կին՝ տաղտկալի կեանք մը ապրած չըլլալ-
ուն համար, ինչպէս ուրիշներ (իմա՛ նաեւ
քնքուշն Աւետիս Աւարտեան) կը՝ յայտա-
բարենա Չպիտի ընեմ սա հարցումը թէ
արդեօք ապագան կամ Պատմութիւնը լա-
ւատեսներո՞ւն թէ յոռետեսներուն իրա-
ւունք պիտի տայ, վասն զի հարկ չէ մար-
գարէ մը ըլլալ՝ գուշակելու համար թէ
ապահովաբար մեր յաջորդներուն մէջ ալ
մեզի հանդէպ պիտի տիրեն կարծիքի, տե-
սութիւններու եւ գազափարի ա՛յն տար-
բեր հոսանքները՝ որոնք ներկային ուղիս-
րէն... լծացած են(!) մեր մէջ՝ անցեալին,
մեր նախորդներուն հանդէպ: Սակայն բո-
նադատուած կը զգամ ինքզինքոյս այս երե-
ւոյթներուն առջեւ զարմանալի եւ որոշիչ
կոչել ժամանակիս նշանները, երբ կը տես-
նեմ թէ չափին աւելի զբաղած ենք անց-
եալով ու ապագայով, եւ շատ քիչ կը հե-
տաքրքրուինք ներկայի իրականութիւնով:
Մասնաւորելով խօսքս եկեղեցականու-
թեան համար, զարմանալի չէ՞ք գտներ
այն անտարբերութիւնը զոր ցոյց կուտայ
յատկապէս Թրքահայ կղերը, հայրապետա-
կան եւ պատրիարքական կրկնակ ընա-
րութիւններու համար: Ռուսահայերը քիչ
թէ շատ պարզեցին իրենց տեսութիւնները
եւ յայտնեցին իրենց ընտրելիները. այս
կամ այն կուսակցութեան բանելիք ուղ-

ղութիւնն ալ անձանօթ չմնաց, մասնաւոր անհատներ յաջող թէ ձախող պաշտպանեցին ու յառաջ մղեցին իրենց մարդը, եւ միշտ աշխարհական խորհողներ ու զրոգներ չըջատեցին էջմիածնի, Երուսաղէմի եւ Կ. Պոլսի Աթոռներու Այնքա՛ն շատ մասածեցին, այնքա՛ն շատ զրեցին, այնքա՛ն շատ ներկայացուցին որ այս բոլորէն յայտնի եղաւ թէ արժանաւոր եկեղեցականներու սո՛վ կը տիրէ եզեր . . . Տեղը չէ՞, պատշաճեցնելով չպրտել հայ եկեղեցականութեան երեսին.

Թէ քո սեմից շահ չունի Հայաստան՝
Թիեյ եմ քո՛ ել, սեմիդ ել վրան.

Ասկայն չաճապարենք յախուռն վճիռներ տալ. ո՞վ դիտէ, թերեւ թրքահայ եկեղեցականութիւնն ալ իր հայեացքներն ու ընտրելիներն ունի թափուր Աթոռներուն համար. Ո՞վ դիտէ, թերեւ նուրբ երգիծանքէ աւելի բան մը չարժիր ծաղրաթերթերու այն գրածը՝ թէ բոլոր բարձրաստիճանի կղերը ինքզինք թեկնածու կը նկատէ թափուր Աթոռներուն, եւ խոնարհաստիճանի կղերը իր նիւթականին ապահովութիւնովը մտահոգուած է. Ո՞վ դիտէ, թերեւ մեր երեսփոխան Հայրերուն շատը Ազգ. Ժողովի յառաջիկայ նիստին իսկ Պ. Ն. Օհանեանի մը նախանձախնդրութիւնով գոչեն. «Ազգը բոլորովին իր վստահութիւնը կը վերցնէ մեր վրայէն, ի՞նչ է պատճառը որ այս Ժողովը հետզհետէ գերեզմանը կ'ըլլայ Ազգին մէջ զիրք եւ անուն չահող եկեղեցականներուն, Օրմանեանի, Երէցեանի եւ Դուրեանի»։ Վերջապէս, ո՞վ դիտէ, թերեւ անո՛նք որ թրքահայ եկեղեցականութեան պատգամաւորներն ըլլալ կոչուած են հայրապետական ընտրութեան մէջ, արդէն ծածուկ (որուն բնաւ հարկ չկայ) համաձայնած են, Երուսաղէմի միաբանութիւնը արդէն իր ընտրելին պատրաստած է, եւ Պոլսի եկեղեցական երեսփոխաններու քուէները արդէն կեղբոնացած են իրենց վաղուան նախագահին համար.

Կրնայ ըլլալ սակայն որ այս բոլոր հարցումները միայն եւ միմիայն Գաղղիկի խելապատակին մէջ տարուբերին, եւ երբ

Տաճարի սիւնակներուն մէջ ալ երեւին, օրօր մը միայն ըլլան վարդապետական ու քահանայական մէկ մէկ ննջող ծրագիրներուն, չըսելու համար դամբանականը մեր մեռած ողբին ։ Այն ատեն, ուրեմն, ներեցէք ինձ դո՛ւք, բոլոր վեհաշնորհ, գերաշնորհ, հոգեշնորհ եւ բարեշնորհ հարք եւ՛ եւ եղբարք, ըսելու ձեզի թէ հրաժարելով իր բոլոր շնորհներէն, կորսնցնելով իր վեհութիւնը, իջնելով իր բարձրութենէն, դէն ձգելով իր գերազանցութիւնը, զրկուելով իր հոգիէն եւ մոռնալով իր բարիքը, Հայ եկեղեցականութիւնը ամօթալի կերպով կը թոյլատրէ ինքզինքին որ էջմիածնի կաթողիկոսութեան համար միայն աշխարհականներ խորհին, զրեն ու գործեն, որ Երուսաղէմի Պատրիարքական ընտրութեան հակելու համար աշխարհական պատուիրակ մը երթայ, եւ Պոլսի աթոռ այնքա՛ն ատեն թափուր մնայ, որքա՛ն ատեն որ աշխարհական երեսփոխաններու երկու հատուածները չկարենան համերաշխել միեւնոյն ընտրելին ։

Կղերամիտ մը չեմ, որպէս զի ոչխար հակահներու այս բուռն գործունէութիւնը ստնձգութիւններ համարիմ. ընդհակառակէն ուրախ եմ որ հակառակ երբեմն անհետաքրքրութիւն կեղծուելուն, շատ աւելի յաճախադէպ են այն նշանները՝ որոնք ցոյց կուտան թէ ամէն Հայ անհատ աւելի կամ նուազ ակնդէտ կը սպասէ հովուական երեք ընտրութիւններուն ։ Իմ ըսել ըղձացածս աւելի այն էր թէ Հայ եկեղեցականութիւնը որքա՛ն ատեն որ գործօն մասնակցութիւն մը չունենայ ներկայի իրականութեան մէջ իր ամենէն կարող անդամներով, իրականան օժանդակութիւն մը չըրէր իր Միութիւններով ազգին հոգեւոր կեանքին, ու յօժարազաւ չաջակցի Ազգային գործիչներուն՝ վերածնունդի սա՛ չըջանին մէջ, դեռ չատեր պիտի պօռան իր երեսին՝

— Տնտքա՛նդ, երբ դուն անտարբեր ես ու թափուր կը թողուս քու Գահերդ, ուրիշներ յորսայս կը սպասեն անոնց վերայ յարձակելու եւ զանոնք տապալելու

համար : Ելի՛ր ուրեմն , եւ ոչ միայն այս անգամին , հապա միշտ պատրաստէ՛ , դատէ՛ եւ ընտրէ՛ քու մէջէն տրժանաւորագոյնները :

Պահ մըն ալ դարանակալներուն դատնալով որոտալից պիտի ժայթքեն .

— Անորէ՛նե՛ր , դողացէ՛ք այս թափուր Աթոռներուն հանդէպ եւ յիշեցէ՛ք թէ Գողգոթայի դահլ , մեր պարծանքն ու դրօշակը , առանց իր զահակալին ու զրօշակին ալ մինչեւ ցայսօր եւ յաւիտեան պաշտելի եւ ահազեցիկ կը մնայ :

ԳԱԶՐԻԿ

ՍԻՒՆԵԱՅ ԴՊՐՈՑԸ

Գ. (1)

ՎԱՆՈՐԱՅՔ ՍԻՒՆԵԱՅ

Սիւնեաց բարեպաշտութեան եւ կրօնական բարգաւաճման յայտնի ու մեծ պատար հանդիսացած են բաղմաթիւ հուշակաւոր վանքերը , որոնցմէ շատերուն աւերակները միայն կը մնան այժմ , յայտնի եւ անյայտ անուններով , ընդհանրապէս Ս. Սահականոս նախաժկայի անուան նուիրուած :

Սիւնեաց աշխարհի վանքերուն վրայ խօսուած ատեն , ուրախ ենք յոյժ չեչտելու համար մասնաւորապէս , թէ անոնք բարեբախտաբար ապաստանարաններ չեն եղած ծոյլ ու թոյլ եւ ուսումնասեաց պարապորդներու : Ընդհակառակն , պահելով հանդերձ խստակրօն սրբութիւն մը , մէկ մէկ կեդրոններ եղած են մասաւոր զարգացման , իսկապէս առաջինները հանդիսանալու չափ բովանդակ Հայաստանի վանքերուն : Առ այս հշմարիտ վկաներ են արդէն եկեղեցական այնքան պատկառելի Դէմքեր , որոնք Սիւնեաց Դպրոցին աշակերտելէ յետոյ , կրօնական , լեզուական ու դիտական հմտութեամբ ժամանակակից իմացականութեան գլխաւոր ներկայացուցիչները կը հանդիսանան :

(1) Շար. 33րդ. Թիւէն :

Գրեթէ ամէն վանք պարբերաբար նշանակութեան արժանի ծաղկեալ վիճակ մը ունեցաւ ուսումնապէս : Թարգմանչաց ժամանակէն սկսաւ մեծ հռչակ հանել Շաղատայ վանքը , ուր կը գտնուէր Սիւնեաց վարդապետանոցը մինչեւ անկէ Տաթևու վանքը փոխադրուիլը (Թ. դար) : Ը. դարում նշանաւոր էին Մաքենոցաց մենաստանը , Թանահատի , Սրտենից եւ Գնդայ վանքերը : Յաջորդ դարու գլխաւոր ուսումնական վայրերն էին Տաթևու եւ Սեանայ հռչակաւոր վանքերը : Իսկ Ժ. դարում գերազանցապէս կը փայլէին Սանահնի եւ Հաղբատու վանքերը : Մասնաւորապէս յիշատակութեան արժանի կը համարինք նաեւ բարեպաշտ իշխաններու եւ մեծատանց այն խնամարկու հոգածութիւնն ու նիւթական առատածեոն նուիրատուութիւնը , որոնց շնորհիւ հետզհետէ կառուցուեցան ուսման ու դիտութեան յատկացուած մենաստաններ : Այսպէս , կրնան Սիւնեաց իշխաններու բարեպաշտիկ մրցման կոթողները նկատուիլ անկասկած Սեւանայ , Վայոց ձորոյ եւ Երնջակայ հովտին հրաշակերտ մենաստանները , որոնց մէջ առաւելապէս փայլեցան Մաքենոցաց , Թանահատի , Խոտակերաց , Կոթայ եւ այլ վանքերը :

Երբ մէկ կողմանէ շատեր ուսման նուիրուելու բուռն փափաքը կը ասած էին , եւ միւս կողմանէ նիւթական նշանակելի օգնութիւններ չէին պակսեր կրթական ջեռնարկի մը յարատեւ ապահովութեանը համար , անտարակոյս տարուած աշխատութիւնները յաջողութեամբ պսակուելով լաւ արդիւնքներ պիտի բերէին երեւան : Իրօք ալ , Սիւնեաց վարդապետանոցի ուսումնական բեղուն վիճակը մեծ հռչակ հանեց է՛ն նշանաւոր անձերուն իսկ հիացում առթելով : Պատմութենէ գիտենք որ է. դարում՝ Սիւնեաց վարդապետանոցէն յետոյ՝ ըստ բաւականին ծաղկեալ վիճակ մը ունէին Շիրակայ Դպրեվանքն ու Կարնոյ Խաչկայ վանքը : Ժամանակին Հայոց Կաթողիկոսը՝ բաժնաստեղծն Կոմիտաս՝ նրկառի առնելով Սիւնեաց վարդապետանոցին ուսումնական գերազանցութիւնն եւ

մանաւանդ լսելով Մաթուսաղայի՝ Սիւն-
եաց այս բազմամուտ եպիսկոպոսին կա-
րողութիւնը, Արշարունեաց գաւառի Ե-
րասխաձորոյ Վարդապետարանն Անոր տես-
չութեան յանձնեց խտահօրէն, ուրտեղ կը
դաստիարակուէին հայ մանուկներ, եւ
ասոնց մէջ էր նաեւ Հայրապետին եղբօրը
տղան՝ Թէոդորոս Զմոռնանք յիշելու նաեւ
թէ Սիւնեաց Վարդապետանոցը՝ բազդատ-
մամբ ուրիշ ուսումնարաններու՝ իր կրթ-
թական գերակշիւ հանգամանքէն զատ,
ունեցաւ յարատեւ ընթացքի մը ուշադրաւ
աշակելութիւնը(1), այս կամ այն պատա-
հականութեան առջեւ կամ գլխաւոր վա-
րիչներու վախճանումով չխափանուեցաւ
կըթութեան այդ հոյակապ Տաճարը, շա-
րունակ հոն վառ մնաց մտքի ու սրտի
մթութիւնը փարատող լուսաւոր ջահը.
նոր անձեր կամ նոր յաջորդներ ջանացին
միշտ աւելցնել այդ լուսոյ պայծառու-
թիւնը, եւ եթէ երբեք միայն անակնկալ
պարագաներ նուազեցուցին զայն մերթ-
ընդ մերթ, պէտք է ըսել միանգամայն թէ
չկրցան երբեք մարել բոլորովին:

Սիւնեաց վարդապետներու այս մա-
սին ցոյց տուած գովելի ջանքն ու փոյթը
գնահատման արժանի է յոյժ, եւ առաւել-
ապէս ներկայիս մէջ բաղձալի է տեսնել
նոյն փոյթը՝ իւրաքանչիւր հայ անհատի
վրայ, ազգային օգտաւէտ Հաստատու-
թեանց շարունակութեանը մասին:

ԳՆԷԼ Ծ. Վ. ԳԱԼԷՄՔԵԱՐԵԱՆ

Գասը գիւղ



(1) Ընդհանրապէս մեր մէջ ո՛ր եւ է կարեւոր
Հաստատութիւն տեւական ըլլալէ կարծես շուտով
կը դադրի այս կամ այն պատճառաւ: Մեր Ազգն իր
ունեցածէն շատ աւելի բարձր վիճակի մը կրնար
անշուշտ հասած ըլլալ ամէն տեսակէտով, եթէ իր
յղացումներուն եւ ծրագիրներուն գործադրական
ձեռնարկէն վերջ անխոնջ յարատեւութեան գեղեցիկ
ոգին եւս ունենար:

ԻՐԱՅԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ՍԱՂՄՈՍՆԵՐԸ

Արեւելքի գերագոյն Աստուածը աշ-
խարհի հետ մարմնանալով, անոր հետ կ'ա-
ծի ու կը զարդանայ, ինչ որ կը նշանա-
կէ թէ ստեղծագործութեան անվերջ կը շա-
րունակուի եւ նստիւրական Գիրքերը ոչ
այլ ինչ կը պարունակեն, եթէ ոչ յաւի-
տեանական աշխարհածնունդ մը Ընդհակա-
ռակն Երրայական հանճարին մէջ, երկու
էջ բաւական է աշխարհի կազմութիւնը
պատմելու համար: Ելոհիմը իր լոյս-կամ-
քին մէկ ճաճանչով կը ստեղծէ աշխարհը,
ապա իրմէ հեռու կը վանէ զայն եւ կը
բազմի ամպերու կոյտերու վրայ: Այս գա-
ղափարէն կրնանք հետեւցնել Աստուծոյ
պատշաճ բանաստեղծութիւն մը, արագ
անոր պէս եւ վայրկեանական, այնպէս որ
ամէն ինչ շատ քիչ տեղ կը թողու պատ-
մութեան, որովհետեւ իր կամքով վայր-
կենաբար կը կատարուի ամէն բան: Հոն
ուր ամէն ինչ հրաշալիք է, հրաշալիքը
կ'անհետի Երբ տիեզերքը կերտող Արհես-
տաւորը, միեւնոյն ատեն Հոգին է անոր,
այն ատեն Գիրքնականը կ'ըլլայ բնութեան
կարգ ու կանոնը:

Այս պատճառաւ է որ ամբողջ աշխարհի
կազմակերպութեան մէջ Աստուածային
ազատ կամեցողութիւնը կը նշմարուի: Այդ
ազատութիւնը իր ետին կցած կը տանի
խանդավառութիւն, սքանչացում եւ շնոր-
հագործութիւն, եւ Սաղմոսը որ այս զղա-
յումները ամբողջ կը պարփակէ իր մէջ,
հրաշքի ճշմարիտ բանաստեղծութիւնը կը
նկատուի: Անիկա իր գաւազանին ներքեւ
կը սարսեցնէ լեռները եւ կը ցամաքեցնէ
գետին ալիքները, իր ոստոստումներուն
մէջ կը չփոթէ մաքին եւ բնութեան յա-
րաբերութիւնները. լայց հոն ամէն ինչ
շարժում է, կեանք է, կենսունակութիւն
է, երգ է եւ բանաստեղծութիւն: Սաղմոս-
ներու հաւաքածոն գրեթէ Երրայական
պատմութեան բոլոր դարաշրջաններուն
պատկանեալ երգերը կը պարունակէ, Մով-

սէսի ժամանակէն սկսեալ մինչեւ Մակա-
բայեցիք:

Սերունդներու այս արձագանգը, ժողո-
վրդին այս հիմնական երգը, աւելի ուժ-
գնօրէն կը լսուի Դաւիթի թագաւորու-
թեան ժամանակ: Այս ժամանակաշրջանի
պատկանող երգերուն վրայ կը ձեւուին
նաեւ միւս բոլոր երգերը. այս իսկ պատ-
ճառաւ աւանդութիւնը անոնք ամէնքն ալ
մէկ հեղինակի մը կը վերագրէ, թէեւ
ամենադոյզն ուշադրութեամբ կարելի է
որոշել իւրաքանչիւր ժամանակաշրջանի
յատուկ ոճն ու ձեւը: Իր բանաստեղծի
Գահուն վրայէն, Դաւիթի դէմքը աւելի
եւս կը փայլի, եւ Ս. Լերան վրայ իր
Աստուծոյն քով կը բազմի: Անիկա իրիւ
զաղափարական անձնաւորութիւն, պատ-
մութեան վրայ կը սաւառնի, եւ իւրա-
քանչիւր ժամանակաշրջանի միտքը նոյն
զաղափարի զարգացման եւ ընդլայնող մին
նպաստելով, ապագայի հաստատուն խոր-
հորդանշանը եւ բոլոր յոյսերու պատկերը
կը դառնայ: Ահա թէ ինչո՞ւ համար Սաղ-
մոններու յաղթական այդ մեծ երգերը
բաղմանալէ չեն դադրիր բնաւ, ըլլայ խա-
ղաղութեան, ըլլայ պատերազմի ժամա-
նակ:

Անոնք կը բազմանան, կ'աճին, կ'եր-
գուին ա'յնքան աւելն ուրջան Երրայական
ժողովուրդը դոյ է եւ կ'ապրի. անոր հետ
իրենք ալ կը վերջանան: Այդ երգերուն
կապուած է ամէն ինչ, մարդարէնիւր, պատ-
մաբաններ, բարոյագէտներ: Անոնք իրենց
աւելի կամ նուազ հապճեպ չափականու-
թեամբ կերպով մը ցոյց կուտան յաջորդ
սերունդներու վերապահուած տառապանք-
ները: Այդ չափաբերութիւններու մէջ մերթ
ձայներու ներդաշնակութիւնը կը խան-
գարուի, ժողովուրդը կարծես մութ եւ
դժուարանցանելի աստիճաններէ դէպի ան-
դունդը կը զիմէ: Հեռուէն կը հետեւիս
պնոր, եւ ահա աւաղաններու մէջ կը կոր-
սուիս, ուրիշ ձայն մը կը լսես, որ գե-
րութեան երկիրներէն կ'արձագանգէ: Եր-
բեմն զիշերուան մէջ հեծող ձայն մը
միայն կը մնայ, աւերակներու մէջ մոռ-
ցուած Դեւտացիի մը, հովիւի մը, մարգա-

րէի մը կամ նոր օծուած թագաւորի մը
ձայնն է այն: Կարծես ամբողջ Հրէաստանը
կորսուած է եւ ներքին միաբանութիւնը
ջնջուած, բայց ժամանակէ մը վերջ յաղ-
թութեան երգը դարձեալ կ'արձագանգէ.
ծիսական երգեցողութիւնները դարձեալ կը
թնդան: Ժողովուրդը կը շարժի, դուրս
կուգայ կարծես գերեզմանէն ու կ'երգէ.
երգերուն եւ մեղեդիներու մէջէն աւելի
լուսաւոր կ'երեւի իսկաւ թագաւորին
պատկերը, Աստուծոյ քաղաքին դուռը կը
բացուի, եւ այս բոլոր իրադարձութիւն-
ներուն մէջ չես կրնար գիտնալ թէ անց-
եալ յաղթութեան մը ներկայ կը զսնուիս
թէ ապագայ:

Քահանայութեան եւ թագաւորութեան
ոգիով ներշնչուած այս զգացումներուն
մէջ, կան նաեւ ափսոսի զղացումներ,
որոնք գոյութիւն չունէին բնաւ ուրիշ
երկրամասերուն մէջ: Սրտաբեկութիւն,
կսկծեցուցիչ զաղափարներ, վեքշապէս
ամէն ինչ որ ներքին կեանքը կը հիմնա-
ւորէ, իբրեւ զանձ հաւաքուած կը մնայ
Հրէաստանի թագաւորի մը թագին տակ,
որովհետեւ մարդը գծտած կ'երեւի այլեւս
Աստուծոյ հետ: Այսպէս, Սաղմոններու մէջ
կը տեսնենք որ Աստուածները մեծադորդ
բաներէ միայն հաճոյք կը զգան, անոնք
կամովին աստղերը իրենց բնակարանները
կ'առաջնորդեն, եւ հոգ չեն ըներ բնաւ
երբ մարդիկ կսկծեցուցիչ զաղափարներով
կը տանջուին: Եւ ահա արդէն կ'երեւի
Աստուած մը որ աշխարհէ հեռու կը բնո-
կի թէեւ, բայց իր այդ հեռաւորութեան
մէջ կը լսէ վիշտի եւ անձկութեան աղա-
ղակները: Անիկա կը կտրէ կ'անցնի ան-
հունութիւնը, կը հասնի մարդոց քով՝ լը-
սելու համար, կ'աղատէ զանոնք, իր եւ
անոնց մէջ սերտ յարաբերութիւն մը հաս-
տատելով: Մարդոց եւ իր միջեւ եղած
յարաբերութիւնը քահանայական ցեղի մը
եւ պետի մը յարաբերութեան նման է:
Աստուած հայր է եւ Իսրայէլը որդի: Այս
է Հին Կտակարանի սուրբ ընտանիքը, իս-
կապէս խիստ ընտանիք, սոսկալի հայրու-
թիւն, որովհետեւ ընտանիքի Մայրը կը
պակսի, Ս. Կոյսը կը պակսի:

Սաղմոսներու մէջ կան այնպիսի հատուածներ, որոնք նմանութիւն ունին Rig-Védaի հետ: Այդ նմանութիւնը վերին Ասիայէ եկած շունչ մըն է որ մեզի անծանօթ ճամբով մը մուտ կը գործէ հրէական միտքին եւ հոգւոյն մէջ: Նահապետներուն առաջին երգը, որ երկրի ամբողջ կողմերը կրկնուած էր, իր ամբողջ զօրութեամբը կ'արձագանգուի Սիօնի լեռան վերայ, եւ Արեւելքը երկու արձագանգ ունի տակաւին . . . : Երբ Հիւնաշայան Ինճրաւէ, Լիքանանը Եհովա կը պատասխանէ, թէ եւ Եբրայական բանաստեղծութիւնը կարելի չէ բազդատել հնդկական երգերու հետ, բայց իր թերութիւններէն մին է դադափարներու յաճախակի կրկնութիւնը, անիկա կ'օրօրէ իր չափարանութիւնը, ինչպէս կ'ընէր Դաւիթ իր պարստաբեկը՝ իր մտքին որոշ ուղղութիւն մը տալէ առաջ: Սակայն պէտք է ըսել որ եթէ Եբրայական բանաստեղծութեան զգեստը գեղջկական է, ներքնապէս թէ՛ սրտով եւ թէ՛ հոգւով վսեմ է ու արքայական:

Եբրայական բանաստեղծութեան այդ հաւաքածոն՝ Սաղմոսը՝ խմբագրուած է ասոնական օրերը Տապանակին կամ Խորանին շուրջը հաւաքուելու, երգելու եւ պարելու համար: Աւելորդ աշխատութիւն մըն է քննել թէ որո՞նք են Դաւիթի վերագրուած Սաղմոսները, միայն պէտք է ընդունիլ թէ բանաւոր է Սաղմոսներու նման բանաստեղծութիւն մը պակեւ Դաւիթի անունով, որ հովիւի եւ թագաւորի բոլոր յատկութիւններն ունի իր վրայ:

Քաղեց՝ ՍՈՒՐԷՆ Ծ. Վ. ԴԱԼԷՄԵՍՆ Բաղեշ

ԿՐԾՆ. ԴԱՍԱԴՐՔԵՐ.— Կրօն. Ժողովոյ կողմէ չաբժուս խմբագրութեանս ղրկուած չրջաբերական մը կը ծանուցանէ թէ յատուկ յանձնաժողովոյ մը քննութեան վրայ Կրօնի, Եկեղ. պատմութեան եւ բարոյագիտութեան ուսուցման համար յարմարագոյն դասագիրքեր որոշուած են՝ Դաւիթ Խաչկունցի Կրօնի Ուսումը (Տարր. Միջին եւ Բարձր. դասընթացք) եւ Բարոյագիտութիւնը (Դուն պիտի ըլլաս. միջին եւ բարձր. մանչերու եւ աղջկանց համար), Մուշեղ Եպի. Բրիւս. Բարոյականը, եւ Տիկին Թէոգրիկ Արդի Բարոյագիտութիւնը:

ՎԵՐՋԻՆ ՎԱՐԴԵՐ



արդերն աղուոր կը Թօշին արդ,
Փուշերն անոնց խոցեն սուր ցու.
Ուր շրթները ցամքին հանդարտ
Քերթողին, որ երգ մը լացաւ:

Ու երկինքն ալ ատեն ատեն
Հեգնեց զանոնք մութին անցեց.
Վարանքներն ալ ցաւը պատեն
Երգողին, որ վիշտ մը պատմեց:

Լուսնակն անոնց շողերն իրեն
Չ'ըրկեց, ու Արեւն անշուք
Ճառագայթ մը չտուաւ վերէն
Լացողին, որ Թափեց իր սուգ:

Վերջին վարդեր, ա'լ կը հիւծի
Ձեզ պէս երազն իմ անարի.
Աւա'ղ, պլպլուն ըսաւ ինձի
Պերթաղէն ալ Թող երբէք չ'ապրի:

Վ.ՊՐԵՎԱՆՔՑԻ

ԿԱՅ ԱՍՏՈՒԱԾ

Դ. (1)

Կա՛յ Աստուած մը. — Այո՛, հոգեկան կարողութեանց երեսոյթները եւ տիեզերքի ներդաշնակութիւնը զայդ կը հաստատեն.

Ոչ ոք կը հերքէ այն իրողութիւնը թէ մինք ամէն ուր հաղորդակցութեան մէջ զրուած ենք օրէնքի, պատշաճութեան, ներդաշնակութեան, գեղեցկութեան եւ ուրիշ հոգեկան կարողութեանց անտարակուսելի յայտնութեանց, ու պերադոյն մեծութեան իմաստութեան հետ: Մենք չենք կրնար արդիւնքի մը անմիջական դիտակից ըլլալ, ոչ ալ կարող ենք ըմբռնել անոր ներքործութիւնը. բայց, ան՝ գոյ

(1) Ա. եւ Բ. յօդուածները տես Տաւադ Ժիւ 21 եւ 26: Նիւթերու առատութիւնը հարկադրած էր զմեզ յետաձգել շարքն այս շատ հմտալից յօդուածներուն՝ զորմ Անգլիացի լուրջ հեղինակի մը, զոր յատկապէս Տաւադի համար Պարզմանած է Սեբաստիայէն Տիար Յակոբ Ալմունեան, պատուական աշխատակից մը. որուն ինքնագիր զրուածքներն ալ, արձակ եւ ոտանաւոր, վայելած են արդէն մեր ընթերցողները:

(Ծ. ԽՄԲ)

է, եւ մենք գիտենք թէ գոյութիւն ունի :
Ռաֆ Քաննրը, Հէնրի Տրըմընտի մասին գրելով Պրիքիշ Ուիլիսի մէջ, կը պատմէ թէ, երբ ինք կը պատէր իր բարի ուսուցչապետին հետ փողոցին մէջ, տասն եւ վեց տարեկան մատաղատի աղջիկ մըն ալ իրենց առջեւէն կը քայէր «Նայէ՛ տա աղջկան քալումքը», բայց Քաննրը : «Այո՛, որստասիտանց նա եռանդաղին, այդ հիանալի՛ է. նպատակաւոր համաշափութեան մը գիտակից եմ, բայց չեմ կրնար լիովին որոշել զայն» :

Եւ ճշմարիտն այն է, որ ատելա տիեզերքի օրէնքն ու փառքն է : Երբեմն կրնանք զգալ զայդ, եւ երբեմն չենք կրնար : Բայց ան՝ դոյ է. — Համաշափութիւն, երաժշտութիւն, ներդաշնակութիւն, հաղորդակցութիւն, գեղեցկութիւն, օրէնք կայ վերջապէս : Ան՝ զոյ է եւ մենք միայն պէտք է դիտենք զայն, եւ այն ատեն, պաշտումի թիւ մը պիտի թրթռացնէ մեր սրբտեղը, հանգէպ Աստուծոյ հողիին, որ զայն դրաւ հոն : Ո՛րքան իրաւամբ բսած է Յոբ, իր մոռյլ օրերուն մէջ. «Հարցո՛ւք երկրին եւ ան քեզ պիտի սոլբեցնէ» :

Ասիկայ մտերացածոյ կարծիք մը չէ : Ամէն կշռազատ միտք պիտի ընդունի թէ օրէնք եւ նպատակ կը պահանջէ իրեն՝ իբրեւ պատճառ՝ Միտք մը Տիեզերք՝ ասանկ տպացոյցներու եւ այս հանգամանքն ունեցող նշաններու դէմ կը դանդաղ : Ամենուրեք համաշափութիւն, յարգարում, օրէնք կայ : Առէ՛ք ձեր ամենագորաւոր մանրագէտը, եւ նայեցէ՛ք կեանքի ամենապղտիկ կողմերուն վրայ, կամ առէ՛ք ձեր հաղորդակցութեան գիտակը եւ յանդէ՛ք ամենահեռաւոր առարկաներուն : միեւնոյն արդիւնքը ամենուրեք. — Համաշափութիւն, գեղեցկութիւն, կարդ, կանոն :

Այո՛, փրցուցէ՛ք զաշտի մարդարածաղկը կամ յանդէ՛ք թիթեռնիկին դոյներուն վրայ, իջէ՛ք ուղկէնին յատակը կամ բարձրացէ՛ք լեռան կատարը, քննեցէ՛ք բնութեան կեանքերը լծակին եւ կամ մեծամեծ ձուկերը ծովուն, հետախուզեցէ՛ք ժամանակի օրէնքը կամ ուսումնասիրեցէ՛ք հիւլէններու, շամանգաղներու, եղեկարոն-

ներու գործողութիւնները, սեւեռեցէ՛ք ձեր աչքերը աստղադարդ երկինքին կամ յանդէ՛ք փոքրիկ մանկան դէմքին : գնացէ՛ք աւազուտ անապատները կամ արեւադարձային անտառները, — ո եւ է տեղ, ու ամէն տեղ, շնչաւոր ու անշնչ, վերն ու վարը, ձուկ ու թռչուն, մարդ ու անասուն, միեւնոյն է ճիշդ : Պիտի գտնէք, մեծ, պանծալի ու համոզիչ փաստեր, Ամենիմաստ, Ամենակարող, Ինքնագոյ Արարչի մը գոյութեան :

Ճրտնք Պայեարտ, իր «Անհաւատքեան նշաններ» երկին մէջ, կոչումներ կ'ընէ Լորտ Բէլվինէն. — Յնորական է այն կարծիքը թէ լուսարեւ եթերը պատահաբար իր ճառագայթները դուրս կ'արձակէ, թէ թիթեռնիկին կամ գեղածիծաղ ծագիկին թերթերը յառաջ կու գան հիւլէններու դիպուածական գործակցութեամբ, եւ զիպուածական գործակցութեան յառաջ դալովը հաճոյք կը պատճառեն, ինչ որ կը նշանակէ թէ հիւլէններու ուրիշ կերպ դիպուածական գործակցութեամբ մըն ալ ես ինքս յօրինուած եմ եւ այդպէս պարտ էի ըլլալ : Բայց չեմ դիտեր թէ ի՞նչպէս մեկնելու է ասիկա : Անհաւատութեան զաղափարը այն աստիճան անիմաստ է որ չեմ գիտեր թէ ի՞նչպէս կարելի է զայն հաստատել տրամաբանօրէն(1) : Կարճ խօսքով, ասանկ քաներու հաւատը ընծայելը՝ աւելի մեծ նախադէպ մըն է ողջմտութեան, քան փառքն ու կարողութիւնը վերապրել մեծ եւ ամենիմաստ Արարչի մը :

Դարձեալ, ձեզմէ շատեր ինծի նման պատեհութիւն ունեցած են տեսնելու եւ վրայէն անցնելու Հայ Չէվրլ Պրիճի, Նիքէսթրլի, երկայնարազուկ Ֆօրթ Պրիճի, Սքօթլէնտի եւ գեղեցկաչէն ու սիգապոնծ Սքօթլէնլըն Պրիճի, Բլիֆթօնի, Պրինթօլի (2) : Եւ ի՞նչ է այն տպաւորութիւնը զոր

(1) Լորտ Բէլվին ալ վերջերս յայտարարեց. — Մի վախնաք Ազատականներէն : Եթէ բաւական կորովի միտք ունիք, պիտի տարալուրդ գիտութեամբ Աստուծոյ հաւատալ, ինչ որ բոլոր կրօնքներուն հիմն է :

(2) Նշանաւոր կամուրջներ են ասոնք, ոմանք Անյլիոյ մէջ եւ ոմանք Սկոթլանդի մէջ : Նա մանաւանդ Սքօթլէնլըն Պրիճի՝ կախեալ կամուրջ մըն է Սկոթլանդի մէջ :

կրած ենք իւրաքանչիւր հանդիպումի մէջ, հոյակապ միտք, սքանչելի նորամտութիւն, փայլուն կերտուած եւ յօրինուածքի զօրաւոր տոկունութեան : Եւ ըսած ենք իւրովի . «Այս կամուրջները երկնող, ճարտարագործող, կերտող մարդեր՝ խորունկ հմտութեան տէր մտղեր եւ հանճարեղ արուեստագործողներ էին : Սխալած ենք արդեօք : Այսպէս ալ մեծ ճարտարապետին ստեղծագործութիւնները՝ իմաստուն իմացականութեան մը յիշատակարաններն են : Նմանապէս, երբ բնութեան հանդիպինք, պիտի տեսնուին բնութեան հրաշալիքները : Վիթխարի ուկէանը, աստղադարձ երկինքը, արծաթ լուսինը, հսկայ լեռները, տիտան ծառերը, ասոնց հետ բաղդատմամբ, չոյն իսկ այդ մեծ եւ սիրուն կամուրջները՝ անկերպարան եւ աննշան արտադրութիւններ են : Մենք չենք կրնար հաւատալ, չենք ուզեր հաւատալ թէ մին դիպուածաւ չինուած է եւ միւսը հանճարեղ իմացականութեամբ մը : Ինչ որ կը վերագրենք փոքրագոյնին՝ նոյնը չենք կրնար զլանալ մեծագոյնին : Ատիկա ուղարկել եւ մօզուկը քամել պիտի ըլլար :

Անցեալ օր պղտիկ տղեկս ընդունեց ինքնաշարժ խաղալիկ մը, որուն լծուած էր որսորդ շուն մը, պատանի առաջնորդով մը : Անուշաբքը կենդանիին ներքինն է, եւ եթէ դարձնենք բանալին, մօտէջ կը սուրայ սեղանին շուրջ, անիւներուն հետ : Հնարք մըն է ան՝ թէպէտ եւ շատ պարզ հնարք մը : Մէկը կ'ըսէ . « Ինչ ճարտարագոյն առարկայ » : Արդ՝ ենթադրեցէք որ ձեզ կը հարցնեմ .

— Կը հաւատամք թէ այդ մօտէջ շինող մը ունէր :

— Անշուշտ, պիտի պատասխանէք :

— Բայց, ինչո՞ւ, կը պատճառաբանեմ, տեսա՞ք շինուիլը :

— Ոչ :

— Տեսա՞ք երբէք ատոր համանման շինուածք մը :

— Ոչ :

— Ուրեմն ինչէ՞ն գիտէք թէ ան շինող մը ունի եւ դիպուածաւ չէ շինուած :

— Որովհետեւ, պիտի ըսէիք անտարակոյս, ամէն բան կը ցոլացնէ իմացականութիւն, խորհուրդ, հմտութիւն :

— Լա՛ւ : Բայց ի՞նչ կը նշանակէ այդ՝ Միթէ այս յատկութիւնները կոյր զօրութեան մը, դիպուածական զուգահեռութեան մը արդիւնքները, չե՞ն :

— Ստուգապէս ո՛չ, պիտի աւելցնէք . անոնք իմացական եւ հմուտ վարպետի մը վկաներն են :

Իրաւունք ունիք : Այդպէս են : Եւ այդ մօր պատճառաբանութեան մէկ մասն է : Եւ մենք չենք կրնար — մեր համեմատական խելքով եւ մեր սահմանափակ միտքի կարողութիւններով — իւրացնիլ, եւ չենք ուզեր ընդունիլ տղայոց խաղալիկներուն իմացական պատճառներ, եւ դայն ուրանալ մեծ Տիեզերքին համար, որ կը պարունակէ արեւն ու լուսին, աստղերն ու ծաղիկներ, բլուր եւ ձոր, ասուն ու անասուն : Թո՛ղ սկիզբիկները, Ազատախոհները կամ Զգիտականները ինչ որ կ'ուզեն՝ բան . եթէ նոյն իսկ մենք ալ այնպէս ընէինք, Սաղմոսերգուին խօսքերը բառ առ բառ եւ արժանապէս պիտի կատարուին : «Ասաց անդգամն ի սրտի իւրում թէ ոչ գոյ Աստուած» :

Թարգմ. Յ. ԱԼԹՈՒՆԵԱՆ

Պ Ա Ա Շ Ա Ր Ո Ն Ե Ա Ն

ՊՈԼՍՈՅ ՄԷՋ

Ասենախօսութիւն Վառիեթի
քաւրոնիկն մեջ

Հայաստանի ծով ցաւերուն աղանա-տես-երգիչը, որ ասանդհինգ օրէ ի վեր Պոլիս կը գտնուի, չըջապատուած հոյլ մը համակրողներու գուրգուրանքով, տկարութեան պատճառով չէր կրցած գահացում առ զինքը լսելու համար ամէն կողմէ եղած խնդրանքներուն : Կիրակի օրը Պոլսահայ ժողովուրդը բախան ունեցաւ վայելելու զինքը Բերա, Վառիեթի թատրոնին մէջ, ուր «Կեցցէ»ներու որոտաղին աղաղակներուն մէջ ողջունուեցաւ բեմին

վրայ: Ու Պ. Ահարոնեան խօսեցաւ ցնցող, ոգեւորող բանախօսութիւն մը, նկարագրելով Հայաստանի այսօրուան վիճակը, գիւղեր աւերուած, ժողովուրդն արիւնաքամ: Իր վհուկի լեզուն, իր դու չեշտը յուզումի եւ զգածման ծայր աստիճանին հասուցին ժողովուրդը, երբ կը նկարագրէր կացութիւնը մեր զմայախտ երկրին, ուրկէ անցած է վերջին ուղեւորութեանը միջոցին «Վերաւոր էին լեռներն ու դաշտեր, որոնց մէջ մորթուեցաւ լծվարը, վերաւոր էր եւ ժողովուրդը»: Պ. Ահարոնեան նկարագրեց փրկարար դերը Հայ այրիին, ուրկէ աւելի նահատակ դասակարգ չկայ: «Ուր որ սուրբ եւ կրակը գործեց, կայ այրին, լուռ աւանշապահը: Հայ ժողովուրդին այսքան տոկունութեան, այս ապշեցուցիչ դիմացկունութեան մէջ փառաւոր եւ շքեղ դեր է կատարել Հայ այրին, որ համեստ է, ամօթխած, երեսը լաջակով պատած, իր փոքրերը պիտի բարձրանան, որպէս ջարդուած անտառի մը ճիւղերը: Դէթ մի' անգամ պէտք է անցնիլ հայկական դաշտերը: Չի արանջար այրին, համակերպած է, դիտէ մի բան, որ պիտի սաեղծէ, պիտի պահէ»: Պ. Ահարոնեան շատ մաշլ պատկեր մը զծեց Հայաստանի վիճակին, բայց հաստատեց թէ բնաւ յուսահատական չէ այն: Երկտեղ Հայուն ձգտումը, որ է «Ասեղ աշխարհին, ապրի՛լ կ'ուզենք. չկայ ժողովուրդ որ հարկւրաւոր տարիներ ան վերջ առապի, ստեղծագործէ, վերջէն փճանալու համար»: Պերճախօս հեռորդ հաստատեց թէ Հայը անջատողական ձեւատում չունի: Երկրին յառաջդիմութեան համար անհրաժեշտ նկատեց ցեղերու համերաշխութիւնը, զոր յառաջ բերելու պէտք է աշխատին երկրին ղեկավարները: «Պէտք է գործակցութեան պարտաւորել բոլոր տարրերը: Յիսուն տարի հաքը թերեւս այս բեմին վրայ պիտի երեւի քուրդ հեռորդ, եւ պիտի խօսի այստեղ եկող քուրդ կնոջ: Այդ ժողովուրդը չսփառանք ընդունակ է: Անմիտ է ասեղութիւն Քուրդի եւ Հայու. Հայու եւ Թուրքի միջեւ: Վա՛յ այն քարոզիչներին, երբ վաղը այդ տարրերը ըմբռնեն թէ իրենց շահերը հարեւան-

ներին հետ գործակցութեան մէջ էր: Տարրերուն գործակցութեան հետ կայ նաեւ Հայը. Հայուն հետ գործակցութիւնը: Հայը ներքին վէրքեր ունի. արհամարհելու չէ ու եւ է ոյժ, եթէ անկեղծօրէն եկած է ժողովուրդին լուսաւորութեան: Մեր ներքին կռիւները միայն մէկ բան կը վկայեն, կը մոռնանք մեր անցեալը: Բաց ու գոցի պէս զձուձ խնդիրներուն վերջ տանք: Լուռութեան փրկափայտութիւնը երբեք չթաղաւորեց մեր վրայ: Բնութիւնէն դառ անենք, այդ լուռութեան տակ գործունէութիւն մենք չունեցանք»:

Պ. Ահարոնեան վերջացուց՝ հզօր կոչ մը ընելով աշխատանքի, ստեղծագործութեան, բարիքի եւ քաղաքակրթութեան խտէալին(*):

Պ. Ահարոնեան՝ կարողիկոսական ընտելիներու մասին

Վառիէթէի ատենախօսութենէն վերջ Պ. Ահարոնեան առաջնորդուեցաւ Պէշիկթաշ՝ որուն նորահաստատ հայկական ֆիւլը իր անուան նուիրուած է: Բիւլպին նախագահ եւ Պէշիկթաշի Ազգ. երեսփոխան Պ. Միհրդատ Հայկազն բարի գալուստ մաղթեց «Վիսպաւն, բանաստեղծ եւ Կիւկերոնի մը չափ հեռորդ Ահարոնեանին», որուն ներկայացուց ֆիւլպին գլխաւոր անգամները:

Մասնաւորապէս շահեկան էին այն տեսութիւնները՝ զորս թաղիս քարոզիչ Տ. Հրանտ Մ. Վ. Յովսէփեանի խնդրանք պարզեցին՝ Պ. Պ. Ահարոնեան, է. Ակնունի, Միհրդատ Հայկազն եւն. Կաթոզիկոսական խնդրին շուրջ: Բարեբախտութիւն մըն էր էջմիածնի այնքան մօտ ապրող ճշմոքիտ Հայէն լսել Տ.Տ. Դէորդ Սուրէնեանց, Վահրամ Մանկունի, Սուքիաս Պարզեանց, Կարապետ եւ Մեսրոպ եպիսկոպոսներու կեանքին եւ գործունէութեան մասին անկողմնակալ եւ իրական հայեացքը:

(*) Ար ցաւինք որ Թերթիս ծաւալը չներեց աւելի ընդարձակ քաղուած մը տուլու այս ոգեւորող բանախօսութենէն, որուն նմանն հազուադէպ կերպով բախտը կ'ունենանք լսելու:

ներ՝ համեմուտած անձնական յիշատակներով եւ կենսագրական անեփսոյններով, Բազարատ վրդի մասին շատ լաւ գաղափար կազմած է Պ. Ահարոնեան, միայն թէ Ռուս կառավարութիւնը Տեղակալի հարցին պատասխանելով հեռագրած է Էջմիածին որ Պաշտօնակալի մէջ գրուած «Բարձրաստիճանի եկեղեցականներէն պէտք է ընտրել Հայրապետը» բառերը միմիայն եպիսկոպոսները կը հասկցունեն, եւ հնար չկայ Սիւսի Կաթողիկոսէն եպիսկոպոս ձեռնադրել տալ, վասն զի Սիւսի եպիսկոպոսները մինչեւ որ Կաթողիկոսի կոնդակով Էջմիածնի միաբան չտրձանագրուին, չեն կրնար Ռուսիոյ մէջ պաշտօնավարել, ինչպէս յայտնի է հոգելոյս Ներսէս Վարժապետեանի պարագայէն: Այսօր Ռուս կառավարութեան պաշտօնական ընտրելին կը նկատուի արդի Տեղակալը ըստ Պ. Ահարոնեանի՝ որ Աշտարակեցիէն մինչեւ Իգմիլիան նստող հայրապետներուն վրայ ամբողջ տեսութենէ մը վերջ աւելցուց թէ «Ո՛րք եւ ինչպիսի ոք էր յինի կաթողիկոսը, երբ Հայ ժողովուրդը արքուն մնայ եւ սիրով փառի դէպ Էջմիածին, ո՛չ Ռուս կառավարութիւնը եւ ոչ էր ուրիշ ո՛ր եւ Կոթուրիս չեն կարող դաւադրել»:

Դաւով թրքահայ եպիսկոպոսներուն, Պ. Ահարոնեան յայտնեց թէ ինք ծանօթ չէ անոնց եւ ոչ մէկին, սակայն զարմանք յայտնեց թէ «Ի՛նչպիսի մարդ պիտի լինի Օրմանեանը՝ որ Էջմիածնի ձեմարանին մէջ իր արած մի տարւայ դասախօսութեան ընթացքում չափազանց մեծ ազդեցութիւն թողել է իր աշակերտներին վրայ՝ որոնք այժմ բոլորն կերպով կը պաշտպանեն նրա թեկնածութիւնը»: Սակայն մեր անդուգական երգիչը միւս կողմէ յայտնեց որ Օրմանեանի աշակերտներն ալ իրեն պէս կղերականութեան ջերմ կուսակիցներ ըլլալ կը թուին, ինչ որ վտանգ մըն է, աւելցուց, Հայ Եկեղեցւոյ ճշմարտապէս ժողովրդական ոգին»:

Դիչերը սկսած էր յառաջանալ արդէն՝ երբ Պ. Ահարոնեան իրեն ի պատիւ սարքուած թէյի սեղանին շուրջ յոսին կեցող եւ ղինքը անյազօրէն վայելողներուն քաջալերական ներշնչուած խօսքեր ուղղեց՝ եւ անոնց ողջագործումներուն, համբոյրներուն, ծախքներուն յուզիչ ընկերակցութիւնով եւ ողջերթի մաղթանքներով մեկնեցաւ, չուտով վերադառնալու խոստումով:

ՊԱՄՓԻԼԻՈՍ ԵՒ ՅՈՒԼԻՈՍ

ԱՌԱՋԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ

ԺԱՄԱՆԱԿՈՒԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ(1)

Ը.

Յուլիոս շարունակեց իր ընթերցումը.

«Այս խօսքերուն մէջ գտնուած դասը կարելի է սա կերպով բացատրել ւ Օրհնեցէք ձեզ անիծողները, ազօթեցէք ձեր թշնամիներուն համար, եւ ներողամիտ եղէք ձեզ հալածողներուն, որովհետեւ եթէ դուք ձեզ սիրողները միայն սիրէք, ի՞նչ վարձատրութեան արժանի կրնաք ըլլալ: Հիթանոսներն ալ նոյնը չեն ըներ: Սիրեցէք ձեզ ատողները, եւ թշնամի չպիտի ունենաք. խոյս տուէք աշխարհիկ հաճոյքներէն եւ փորձութիւններէն: Եթէ մէկը ձեր աջ երեսին ապասկ մը զարնէ, անմիջապէս ձախը դա՛նուցէք, եւ կատարեալ պիտի ըլլաք: Մղոն մը տեղ քալելու կը հարկադրեն զձեզ, երկուք քալեցէք զձեզ ատոր ստիպողին հետ: Եթէ մէկը վերարկուդ առնէ, բաճկոնդ ալ տուր անոր: Եթէ մէկը ձեռքէդ կը յափշտակէ քու ստացուածքդ, մի փորձիր ետ առնել: Ձեզմէ բան մը պահանջողին տուէք, եւ տուած բաներնուդ համար ցաւ մի՛ զգաք. որովհետեւ Հօրը կամքն այն է որ բարիքները սփռուին ամենուն: Օրհնուած պիտի ըլլայ այն որ շատ կուտայ եւ կը հնազանդի Աստուծոյ պատուէրներուն»:

«Քրիստոնէական վարդապետութիւնը կը պատուիրէ նաեւ. մի՛ սպաններ, մի՛ չնար, վաւաչոտ մի՛ ըլլար՝ ո՛չ մարմնով, ո՛չ մտածութեամբ. մի՛ գողնար, կախարդութիւն մի՛ ըներ. մի՛ թունաւորեր, ուրիշին կամ քու զրաջիւղ ինչքին մի՛ ցանկանար, մի՛ երկնուր, սուտ վկայութիւն մի՛ ըներ, ոեւէ մէկուն վրայ չար մի՛ խօսիր. մոռցիր չարիքը, հեռու կեցիր կեղծիքէ՝ մտքով թէ խօսքով: Ձեր խօսքերը պէտք է սխալ կամ սնտախալ ըլլան. անոնք պէտք է ճշմարտութիւնը յայտնեն, բացայայտ ճշմարտութիւնը: Շահամու պէտք չէ ըլլաք, ոչ ալ ազան կամ

(1) Շար. Ձերդ Թիւէն սկսեալ:

կեղծաւոր կամ չարամիտ, կամ հպարտ : Դրացիին դէմ մի դաւէք չարամտօրէն, մի՛ այպանէք եւ մի՛ ատէք ոեւէ մէկը : Ձեր մօտ կանչեցէք եւ խրատեցէք անոնցմէ ումանք . միւսներուն համար աղօթեցէք : Ուրիշները սիրեցէք ձեր անձէն աւելի : Խոյս տուէք չարէն՝ ուր որ ալ գտնուի, ինչպէս նաեւ ամէն այն բաներէն որ չարին հետ յարաբերութիւն ունին : Քու բարկութեանդ չափի դիր, որովհետեւ կըրնայ սպանութեան առաջնորդել : Նախանձոտ մի՛ ըլլար, ո՛չ ալ վիճասէր կամ զայրացկոտ, որովհետեւ բոլոր այս բաները դէպ սպանութիւն կը տանին . ցանկառէր մի՛ ըլլար որովհետեւ գէպի ցսփութիւն կ'առաջնորդէ, ո՛չ ալ լկտի խօսքեր ըրէ որոնք չնութեան կը տանին : Մոգութեան, կախարդանքի, բախտախաղի մի՛ հետեւիր, ո՛չ ալ այդ տեսակ գործեր ունեցողներու հետ յարաբերութիւն ունեցիր, որովհետեւ բոլոր այս բաները կռապաշտութենէ կուգան : Մի՛ ստեր, զի գողութեան կ'առաջնորդէ . ո՛չ զրամը փնտռէ եւ ոչ ալ սին պատիւները, որովհետեւ գողութիւնը զրանդ առջին պիտի գայ : Խոյս տուր վէճերէ որովհետեւ հայոյոյնքը մօտ է . լիբք, չարամիտ մի՛ ըլլար, քանի որ անէժք է ատոնց հետեւանքը : Խոնարհ եղէք եւ երկիրը պիտի ժառանգէք : համբիսող, հլու, հաճոյակատար եւ ներողամիտ եղէք, վերջապէս բարեհաղաւթութիւն գործածեցէք միշտ : Ինքզինքնիդ մի՛ դուլէք, հպարտներու քով մի՛ յաճախէք, այլ արդարներուն եւ խոնարհներուն քով : Ինչ որ ալ պատահի լաւատեսութեամբ մեկնեցէք, եւ բարիք մը նկատեցէք զրեկէ, գիտնալով որ ոչինչ կ'ըլլայ առանց Աստուծոյ կամքին . . . : Մի՛ աշխատիք անհամաձայնութիւն արծարծելու, այլ խաղաղութիւն սերմանեցէք վիճողներուն մէջ : Ձեռքերնիդ մի՛ կտրկառէք՝ ընդունելու համար, եւ ափերնիդ մի՛ գոցէք՝ տալէ խուսափելու համար : Մի՛ վարանիք տալու, եւ տալէ ետքը մի՛ տրտնջաք, եւ աւելի՛ վերջը պիտի ճանչնաք մեծ բարեբարը : Կարօտեալը փութեմով երեսնիդ անդին մի՛ դարձնէք,

օգնեցէք ձեր նմանին՝ ամէն պարագաներու մէջ : Ո՛չ մէկ բան ձեր ստացուածքը նկատեցէք, որովհետեւ եթէ դուք անպականին, անկորնչելիին համար ընկերակցած էք . ո՛րքան աւելի ճիշտ է այդ՝ կորուստեան բաներու համար : Աստուծոյ կրկնողը սորվեցուցէք ձեր զաւակներուն՝ օրօրոցն սկսեալ : Ձեր հրամաններն առանց բարկութեան տուէք ձեր ծառաներուն կամ գերիներուն, որպէս զի չղաղրին վախնալէ Աստուծմէ որ ամէն բան կը կառավարէ . որովհետեւ Անիկա իրեն պիտի կանչէ բոլոր մարգիկը, եւ ոչ թէ երեւոյթէն դատելով, այլ սրտի բարութեան եւ մտքի շիտակութեան նայելով պիտի ընտրէ :

«Ահաւասիկ մահուոն ճամբան ալ . — Չարիքը, անէժքը, սպանութիւնը, չնութիւնը, ցոփութիւնը, գողութիւնը, կռապաշտութիւնը, կախարդանքը, թոյնը, ագահութիւնը, սուտ վկայութիւնը, կեղծաւորութիւնը, փառասիրութիւնը, հպարտութիւնը, շատակերութիւնը, չարախօսութիւնը, նախանձը, յանդգնութիւնը, անձնապաշտութիւնը : Այս ճամբուն վրայ իրարու կը հանդպին հալածողները, բռնակալները, անոնք որ կ'արհամարհեն ճշմարտութիւնը եւ կը պաշտեն սուտը, որ կ'ուրանան նոյն ինքն Աստուծոյ կողմէ բարիին խոտտացուած վարձատրութիւնը, որ բարիին խոյս կուտան եւ չարը կը վնասեն, որոնք ո՛չ համբերող են եւ ոչ խոնարհ, այլ յանդուգն եւ ինքնահաւան, որոնք կը մերժեն ճանչնալ իրենց Արարիչը, որոնք կը սպաննեն պղտիկ սղաքներու հողին ու մարմինը, որոնք հեռու կը փախին կարօտեալներէն, օտնակոխ կ'ընեն զրկուածները, կը շողոքորթեն հարուստները եւ կը մերժեն աղքատները, վերջապէս բոլոր անկրօններն եւ յամառ մեղապարտները : Եթէ երբէք հանդիպիք այս թշուառներուն, զգոյշ կեցէք :»

Յուլիոս իր ընթերցումն աւարտելէ շատ առաջ արդէն բոլորովին համոզուած էր ձեռագրին մէջ գտնուած գաղափարներուն : Իր մտածումն այնքան կը ներգաշնակէր հեղինակին գաղափարներուն, որ անոր

իւրաքանչիւր հատուածին՝ կը գուշակէր յաջորդ հատուածը: Զննարտութիւնը փընտոնելու անկեղծ բաղձանքով մը ոգեւորուած, շատ լաւ կը հասկնար զայն, քանի որ իր իսկ խորհրդածութիւններուն հետեւանօք անոր մօտեցած էր արդէն: Ուղղակի հաղորդակցութեան կը մտնէր սոյն մեծանուն մտեւային հետ որ այս տողերը գրած էր: Կարգացածները լաւ մը ուսումնասիրելէ հտքը, ինք իր մէջ ամփոփուեցաւ, եւ քննութենէ անցուց իր ամբողջ կեանքը: Յստակօրէն նշմարեց թէ խաբուած էր, եւ թէ իր ամբողջ գոյութիւնը սխալներու հիւսուածք մըն էր: Ապրած չէր ինքը. նիւթական մտածումներ, իր հոգերը, իր գնում հաճոյքները՝ ճշմարիտ կեանքէն ո՛րքան հեռացուցեր էին զինքը:

— Չե՛մ ուզեր մեռնիլ, գոչեց. կ'ուզեմ ապրիլ եւ հետեւիլ գէպի կեանք առաջնորդող ճամբան:

Տասը տարի առաջ Պամփիլիոսի արտասանած խօսքերը առաւել քան երբէք ուժգնութեամբ յիշողութեանը առջեւ պատկերացան: Այդ խօսքերը հիմակ այնքան յետակ եւ ճշմարիտ կ'երեւային, որ կը զարմանար թէ ի՞նչպէս ականջ կախած էր օտարականին, եւ հեռացած՝ Քրիստոնէութեան ճամբէն: Յիշեց սակայն օտարականին իրեն տուած խորհուրդը. «Կեանքը ճաշակելէ եւ գնահատելէ հտքը, եթէ ուզէք, ա՛յն ատեն Քրիստոնեաներուն դասէք:»

— Կեանքը ճաշակեցի, ըսաւ ինքնիրեն, եւ զայն անհրապոյր գտայ, անհիմն, աննպատակ:

Յիշեց նաեւ թէ Պամփիլիոս իրեն խոստացած էր որ Քրիստոնեաներէն սրտագին ընդունելութիւն պիտի գտնէ, ո՛ր ատեն ալ ուզէ իրենց մօտ գալ:

— Ա՛լ բաւական է, գոչեց, խաբուե՛ր եմ. երկար ժամանակ տառապեցայ: Ամէն բան պիտի թողում, Քրիստոնեայ պիտի ըլլամ, քրիստոնէական օրէնքներու համեմատ պիտի ապրիմ:

Իր դիտումն յայտնեց կնոջը որ ուրախութեամբ լսեց ատիկա: Կինը պատրաստ

էր օգնելու եւ իրեն հետեւելու այս նոր ճամբուն մէջ:

Լուծուելիք առաջին խնդիրն այն էր թէ ի՞նչպէս պիտի ընէին՝ այս ծրագիրը գործադրութեան դնելու համար: Ի՞նչ պիտի ընէին իրենց զաւակները: Միասին սանելու եւ մկրտելու էր զանոնք, թէ իրենց հեթանոս մեծ մօրը քով պէտք էր թողուլ: Իմաստուն եւ մարդասիրական գործ մը պիտի ըլլա՞ր զանոնք Քրիստոնեայ ընել եւ զրկանքներու եւ տառապանքներու դատապարտել՝ պերճանքի եւ բարեկեցութեան մէջ մեծցնելէ հտքը: Գերուհին խոստացաւ անոր ընկերանալ եւ վրանին հակել իբրեւ Քրիստոնեայ, բայց մօրը սիրտը չթոյլատրեց այդ բանը, պընդեց որ աղաքն իրենց մեծ մօր քով մնան: Պամփիլիոս հաւանեցաւ այս կարգադրութեան, եւ այլեւս լսել չարեւելք մը չմընաց իրենց ծրագրին դէմ: Հետեւապէս Յուլիոս եւ իր կինը ամէն պատրաստութիւն տեսան ի գործ դնելու համար այս որոշումը, որ իրենց ամբողջ կեանքին մէջ տրուած որոշումներուն ամենէն կարեւորն էր:

ԼԷՈՆ ԹՈՒՍԹՈՅ

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԵԱՆ ԳԵՐԱԴՐԱԿԱՆԸ

Հայաստանի հարստահարութեանց խնդիրը թէեւ երկար ժամանակէ ի վեր Ազգ. Ժողովոյ օրակարգին վրայ կը գտնուի, բայց մասնաւորապէս վերջին ամսուան միջոցին այժմէական դարձաւ, սպանութեանց, խժոժութեանց, առեւանգմանց նորանոր գէպերով, եւ ատոնց հետեւանօք Ազգ. Վարչութեան զրի առած առաջարկադրով, որու ամփոփումը տուած էինք նախընթաց շարթուն: Արդ, աւասիկ երեք նիստ է որ օրակարգի առաջին խնդիր է Ազգ. Վարչութեան այդ առաջարկադրը՝ այնքան ստիպողական՝ որ կը սպասէ Ազգ. Ժողովին վաւերացման, մա-

տուեցուելու համար կառավարութեան, եւ սակայն Աղգ. Ժողովը այս անգամ ալ (անցեալ ուրբաթ) ապարդիւն գումարում մը ունեցաւ, չկրնալով մեծամասնութիւն զոյացնել, եւ ներկայ 66 երեսփոխանները հարկադրուեցան պարապ ժամավաճառութիւն մը ընել Ղալաթիոյ «խօսարան»ին մէջ, ինչպէս չատ իրաւունքով անուանած էր Բիզանդիոն Աղգ. Ժողովարանը, ուրկէ խեղճ գաւառացիին կը սպասէ ու կը սպասէ իր ծով ցաւերուն դարման եւ սպեղանի: Իսկ մեր կարգ մը կեղծ ազգասէրները, որոնք արցունքոտ աչքեր ունին միշտ՝ երբ իրենցմէ զոհողութիւն չի պահանջուիր, գերադրական անտարբերութեամբ մը՝ չեն հաճիր տեղեկանալ երբեք, երբ կարգը կուգայ պղտիկ զոհողութեան մը՝ երթալ բազմուիւ Աղգ. Ժողովարանին պարապ աթոռներուն վրայ, գոնէ . . . թիւ լեցնելու եւ Ժողովը անգործութեան չմատնելու համար:

Բնական էր որ ներկայ 66 երեսփոխանները այդ վերջին նիստին մէջ ջղագրգիռ վիճակ մը ունենային՝ իրենց կարգ մը պաշտօնակիցներուն ծայր աստիճան անպարտաճանաչութեամբ իրենք ալ ի զուր սպաննած ըլլալուն համար իրենց ժամանակը. ուստի իրաւամբ պահանջեցին որ եթէ նիստերուն ներկայ գտնուելու ազգասիրութիւնը չէին ունենար, գոնէ ազնուութիւնն ունենային հրաժարելու:

Մարդ կը վհատի մտածելով որ այս ա՛յն Աղգ. Ժողովն է որ բացի գոցի ճղճիմ խնդրոյն առթիւ հոծ թիւ մը կ'ունենար ներկայ երեսփոխաններու: Ա՛յն Ժողովն է որ Երէցեան սրբազանի երեսփոխանական վաւերացման խնդրոյն առթիւ ոգեւորեալ վիճաբանութիւններ կ'ընէր իր անգամներու ամենասուտար թիւով մը: Երբ կոխ կայ, երբ վէճ կայ, երբ կիճք կայ յագեցնելիք, ամէն ոք պատնչին վրայ է. Իսկ երբ հանրային ցաւ մը կայ ամոքելիք, երբ պէտք կայ ազգային ընդհանուր գործակցութեան մը՝ միջոցներ խորհելու գաւառացիին հեղեղանման արցունքները սրբելու, այն ատեն կարգ մը երեսփոխաններ նախամեծար կը սեպեն չբաժնուիլ ի-

րենց վաճառատան գրասեղանէն, կամ զուցէ բօֆերի կամ նարտի հաճոյքներէն:

Ողորմելի վիճակ, արդարեւ:

* Ժողովին այդ նիստին մէջ ատենական գործողութիւններ միայն կատարուեցան, վաւերացուելով մէկ երկու երեսփոխանի ընտրութիւնը, եւ կարգացուելով Ներսէս Էֆ. Օհանեանի մէկ գիրը՝ արով մարդկային տարրական իրաւանց եւ խղճի հակառակ կը նկատէր Օրմանեան Ս. Ի խնդրոյն այսքան երկար ատեն ձգձգուիլը, եւ ի նպաստ կամ ընդդէմ վճիռ մը չտրուիլը, ինչ որ պատճառ մը կը նկատէր աղգին վստահութիւնը վերնալուսն Աղգ. Ժողովին վրայէն: Ժողովին Ասենուպետը եւ Վահան Էֆ. Թէքէեան բացատրեցին այդ յետաձգման պատճառները, որոնք երբեք արդիւնք չէին մասնաւոր դիտումի: Թէքէեան Էֆ. եզրակացուց թէ «Չեմ կարծեր որ այս Ժողովին մէջ գտնուի մէկը որ որքան ալ հակառակ ըլլայ Օրմանեան Ս. Ի, այնքան անազնիւ միջոցով մը պայքարի»: Բացակայող երեսփոխաններու մասին կարգ մը խօսուընտուքներէ, երեսփոխանական ընտրութիւնները փութացնելու առաջարկներէն, եւ Տ. Հմայեակ Ս. Ի. Հայաստանի հարստահարութեանց վրայ բերած նոր մէկ գիրը կարգացուելէ եւն. ետքը Ժողովին այս ապարդիւն նիստը փակուեցաւ ութ օրէն վերստին գումարուելու որոշմամբ:

ԳՍԻԱՌՆԵՐՈՒ ԱՆԴՈՐՐՈՒԹԻՒՆԸ.— Թուրք թերթերը ծանուցին թէ Անատոլուի Արեւելեան նահանգներուն եւ մասնաւորապէս Վանայ մէջ անդորրութիւնը պահպանելու համար այդ կողմերը մօտակայ վաշտերէն կանոնաւոր զինուորական ոյժ մը պիտի ղրկուի: Վարչապետն եւ Պատերազմական նախարարը Գշ. օր խորհրդակցեցան Անատոլուի կացութեան եւ հոն ղրկուած ու ղրկուելիք զինուորներու մասին:

* Տեղապահ Ս. Հայրը Գշ. օրը անձամբ զիմումներ բրաւ Վարչապետին եւ Ներքին գործոց ու Պատերազմական նախարարներուն մօտ, որոնց պարզեց գաւառի ոճրա-

գործութիւններուն, եւ ոճրագործներու անպատիւ մնալուն, նաեւ Օսման փաշայի տակաւին պաշտօնի վրայ պահուելուն հետեւանօք Հայ ժողովրդին մէջ յառաջ եկած անտարբերութիւնը: Վարչապետն եւ նախարարները յուսադրող խօսքեր ըրին. ըսին թէ միջոցներ ձեռք առնուած են որոնց դոհացուցիչ արդիւնքը պիտի տեսնուի ի մօտոյ: Մահմուտ Շէվքէթ փաշա՝ մաքնաւորապէս Օսման փաշայի խնդրոյն համար ըսաւ. թէ զինուորական իշխանութիւնն առանց իր կողմէ քննութիւն կատարելու չի կրնար ո եւ է տնօրինութիւն ընել, հետեւապէս այդ քննութեան կէքին կը սպասէ:

Բռնի խառնաճման խնդիրներու համար Պատրիարքարանները հաւաքական խորհրդակցութիւն մը պիտի ընեն այս օրերս, զիմիւր համար կառավարութեան, եւ խնդրելու որ յատուկ օրէնք մը հաստատուի այս մասին:

Հ. Բ. Հ. Միոթիթիւնը որ ասկէ առաջ 500 ոսկի յատկացուցած էր Մշոյ դաշտի կարգ մը Հայ երկրագործներու հողերն ազատելու համար քուրդ աղաներու եւ վախառուներու ձեռքէն, Մշոյ երեսփոխան Գեղամ էֆ. Տ. Կարապետեանի զիմուսին վրայ այժմ եւս 500 ոսկի կը յատկացնէ Սասունի պարտական Հայերու հողերն ազատելու համար: Որքան ուրախ ենք այս Միութեան կատարած նախաձեռնական գործին համար, նոյնքան մեծ է մեր ուրախութիւնը՝ անոր հետզհետէ ծաւալ գտնելուն համար: Դո՛ւրսեմք կը ծանուցանենք թէ Տրապիզոնի մէջ եւս կազմուած մասնաճիւղը առ այժմ ունի 33 անդամակիցներ՝ մօտ 90 ոսկի մուտքով եւ 401 զրշ. ամսավճարով:

ԳԱԽԱՌՆԵՐՈՒ Առաջնորդան արժողները Թաթուր չթողելու հոգածութեամբ, Խառն Ժողովն անցեալ շաբթու Արարկիրի Առաջէ. տեղապահ կարգեց Տ. Գեղամ Վ. Թէվէքէլեանը, Սամսոնի՝ Տ. Խոսրով Մ. Վ. Պէհրիկեանը, Շ. Գարահիսարի՝ Տ. Վահրամ Վ. Նազարէթեանը, եւ Պայազիտի՝ Տ. Նզիշէ Վ. Ամատունի:

Տ. Հրակ Վ. Յովսէփեան, Պէշիքթաշի Հոգեշնորհ քարովիչը, որ կարճ ժամանակի մէջ այնքան ջիւղ համակրութիւն մը կըցաւ ծնցնել իր շուրջը, շաբթուս պաշտօնագիր մը ստացաւ Պատր. Տեղապահ Ս. Հօրմէն, որ կը ծանուցանէ թէ Կարնոյ Առաջնորդ Տ. Սմբատ Ս. Եպիսկ. ի խնդրանօք, եւ Ազգ. Կեդր. Վարչութեան Խառն Ժողովոյ որոշմամբ, յարակից Վիճակներէն Դերձանի Առաջն. փո-

խանորդութեան կոչուած է: Ուրախ ենք իմանալով որ Ն. Գերապատուութիւն սիրայօթար կ'ընդունի գաւառական այս պաշտօնը, որուն մէջ վստահ ենք թէ օգտաշատ գործունէութիւն մը պիտի կրնայ գոցնել, ծանօթ ըլլալով իր երիտասարդ հասակի եռանդը, որուն կը միանայ իրմէ շատ աւելի տարէցներու քով հաղուագէպ շրջահայեաց լրջութիւն մը: Կը շնորհաւորենք եւ իր նոր պաշտօնին համար կար եւ կարողութիւն կը մաղթենք Ն. Գերապատուութեան, որ Տաճարի ընթերցողներուն ալ ծանօթ է: Գազրիկ ստորագրութեամբ իր հմտալից եւ զգայուն եւ նոյնքան կորովի յօդուածներով:

ԲՐՕՖ. Յ. Ճէճիճեանի քարոզչական քսան եւ հինգամսայ յոբելեանը կատարուեցաւ Կիրակի օրը վաղիւ: Հանդէսով մը Բերայի Հայ Աւետարանականաց Սերբորդութիւն Եկեղեցիին մէջ, խուռն բազմութեան ներկայութեամբ, ի զիմաց Տեղապահ Ս. Հօր ներկայ էր Տ. Նզիշիկ Մ. Վ. Պապեան: Կրօն. պաշտամունքէն ետքը Վեր. Ա. Շմաւոնեան զգածուած շնչտերով զրուտեց պատուական յոբելեարը, եւ պատկերացուց անոր քարոզչական օգտաշատ գործունէութիւնը: Յետոյ խօսեցան Տ. Նզիշիկ Մ. Վ., եւ Միսիօնարիան ընկերութեան կողմէ Մր. Պարնըմ, որ շատ հաճակրական լեզու մը գործածեց Հայ Եկեղեցւոյ նկատմամբ, նաեւ Լանկայի Հայ-Աւետարանական Եկեղեցւոյն կողմէ Վեր. Յ. Ճէճիգեան: Հոսակ ուրիմն խօսք առաւ Յոբելեարը, զգածեալ բառերով շնորհակալութիւն յայտնեց իրեն ընծայուած պատիւին համար, եւ մասնաւորապէս խնդրեց Ազգ. Պատրիարքարանի ներկայացուցչէն որ Տեղապահ Ս. Հայրը ազօթէ իրեն համար: Վերջին օրհնութիւնը սուաւ գրաբար լեզուով Յոբելեարին աւներ հայրը՝ ծերունազարդ Վեր. Իւթիւճեան, որմէ յետոյ ներկաները փութացին իրենց շնորհաւորութիւններն յայտնելու Բրօֆ. Ճէճիգեանի մօտ, որ թէեւ տակաւին բժիշկներէն արտօնուած չէ լսելի ընելու իր հնչեղ ձայնը, բայց յուսալից ինք որ Հայ հասարակութիւնը պիտի կրնայ երկար տարիներ օգտուիլ իր հմտալից քարոզներէն:

Արտօնատէր ՀՄԱՅԵԱԿ ԲՆՆՅ. ԷՔՍԷՐՃԵԱՆ

ՏԵՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԶԱՐԽԱՅՐ ԲՆՆՅ. ԿԵՂԻՐԵԱՆ

ՏՊԱՐԱՆ Տ. ՏՕՂԱՄԱՃԵԱՆ.



ԿԸ
ՏՊԱՐԱՆ
ԱՅՑԱՔԱՐՏԵՐ
ՏՈՄՍԱԿՆԵՐ
ՆԱՄԱԿԱԿԼՈՒՆԵՐ
ԹԵՐԹԵՐ, ՀԱՆԴԷՍՆԵՐ
ԿՆ. ԿՆ.

Տ Պ Ա Ր Ա Ն

ՏԻԳՐԱՆ ՏՕՂՐԱՄԱՃԵԱՆ

(Հիմնուած 1899ին ի Բարիզ)

Կ. ՊՈԼԻՍ, Սուրբան-Համամ, Մօլա-Ֆուաբ, բիւ 16.



մէն տեսակ միագոյն եւ բազմագոյն սպազրութիւն ,
շէնդ եւ պարզ, մաքուր, խնամեալ եւ ածանագին:

ՄՏԱՅՈՒՄԻ ԳԻՐՔԵՐ

ՄԱՆՁԻՍԴԸՐԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ . —

Գրեց Մուշեղ Եպիսկոպոս . — Պոստոնի Ազգ թերթին մէջ թերթօնի ձեւով հրատարակուելէ ետքը, առանձին հատորով ալ հրապարակ ելած է այս կարեւոր գործը, որ նոյն պատուական գաղութին շահեկան պատմութենէն զատ, կը պարունակէ մանաւանդ հետաքրքրական տեղեկութիւններ հայկական խնդրոյն նկատմամբ, ձեռագիր օրինակը Ներսէս Վարժապետեանի անտիպ նամակներուն, նաեւ պատկերները Մանչէսթըրի Հայոց հոգեւոր հովիւներուն, Մանչէսթըրի Եկեղեցիին, եւն : Շատ կարեւոր եւ ընթերցանութեան արժանի հատոր մը : Գին 50 սէնդ : Դիմել Լ. Օսպայշեան, The foreign book-store 795 Washington st. room 2, Boston Mass :

ԸՆԴՀ. ԱԶԳԱՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ . —

Ա. Հին ազգեր . — Գրեց Դաւիթ Խաչկոնց . — Ա. հատորը ընդհ. ազգաց պատմութեան գասընթացքի մը, խնամով պատրաստուած : Այս Ա. մասին մէջ կը խօսուի արեւելեան հին Ազգերու վրայ : Գործը զարգարուած է քարտէսներով, պատկերներով եւն. , եւ հրատարակուած է Զարդարեան գրատան կողմէ : Գին 5 զր. :

ԱՆՆԱ ՔԱՐԷՆԻՆԱ, Լեոն Թոյսթոյի, Թարգմանեց Եր. Օսեան : Աշխարհահռչակ հեղինակին լաւագոյն գործերէն մէկը, հրատարակուած Պալենց գրատան կողմէ Երկու հատոր, գին 15 զր. :

Մ. ԹԱԳԻՈՐ ՊԱԼՃԵԱՆ

ՓԱԿԵՂԱԳՈՐԾ

Երկար ժամանակէ ի վեր ծանօթ է իր ճարտարութեամբ : Կը շինէ եւ կը պատրաստէ գեղեցիկ սաղաւարտներ, եւ մանաւանդ վաղեղներ՝ ընտիր թուիչի, առուի, սաթէն տը լիօնի եւն. վրայ : Գիները գոհացուցիչ :

Դիմել Ղալաթիա, Ս. Լուսաւորիչ Եկեղեցի, ուր կը գտնուի միշտ :

5—1

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՔՆԱՐ ԵՐԳԱՐԱՆՈՒԹԵԱՆ

ՀԱՅ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ

Պատրասեց՝

ԿՐՈՆԻԴԷՍ ՔԶՆՑ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

Կարեւոր պակաս մը կը լեցնէ եկեղեցւոյ երաժիշտ մանուկներու համար, որոնք ասոր գործածութեամբ ա'լ պէտք չպիտի ունենան ժամագրքի, տաղարանի, շարականի, փոխասացի եւ այլ յարակից տետրակներու եւ գիրքերու : Տէր եւ հրատարակիչ Աղեքսանդր Եօզիասեան : Տպ. Մարգուտն, «Կիւթնպէրկ» տպարան, 1911 : Գին 7 զր. (մէճիտ 19էն) : Բօսդի ծախք 30 փր. :

3—2

ԳԻՆ 1 ՂՐՈՒԾ

Ցպագր. 8. ՏՕՂՐԱՄԱՆԱՆ

Սուրբան-Համամ Մօլա-Թաշը, Թիֆլիս 16

4. ԳՈԼ